## 108. ՋՀԱՆ-ԲԵԿԸ

*Մի թաքավըեր ա ըլըմ, իրեք տղա ա ունենմ։ Մընի անըմը Ջիվան ա ըլըմ, մընինը՝ Ջըհանգիր, պուճուրինն էլ՝ Ջհան-բեկ։ Օրերի մի օր սըհա̈նք երազ են տըենըմ, վըեր օխտը կլխանըի դեվի հարստութինը, կարողութինը իրանց հոր կարողութինիցը շատ ա։ Մի օր սըհա̈նք նստըմ են մըսլահաթ անըմ, ասըմ են. «Քյըրնա̈նք, ինչ վըեր կա, սրփենք պիրենք»։*

*Էքսը քյնըմ են իրանց հոր կուշտը իրավունք վըեր ունըմ ու ճամփա ընգյնըմ, համա ասըմ չեն. Թե ինչի ենք քյնըմ, ասըմ են. «Քյնըմ ենք աշխար ման կյա̈լ»։*

*Հերը ասըմ ա. «Ա՛ բալա, ծըեղ մըենակ մի խրատ տամ. վըերգի կըլեք, վըերըղ կըքյնա̈ք, ծըիր չենըր, ծըեր ծըեռիցը քըցեք վըեչ, թեկուզ ճըվհտկի էլ քյնա̈ք, ունքերնուտ ծրեռներուտ պահեցեք, էն ըշխարըմը ես շատ եմ ըլել, էն ըշխարի խասիաթը, օրենքը գյիդըմ եմ»։*

*Սըհա̈նք ճամփա են ընգյնըմ՝ քյնըմ են, քյնըմ են մըչև հասնըմ են մի տըեղ, վըեր ճամփեն իրեք տեղով ա քյնըմ։ Մեծը ասըմ ա. «—Իրեք ախպըեր ենք. իրեք ճամփա ա, ամըեն մինը՝ մընիս։ Տուք ըստի նստըեցեք, ես էս ճամփենի կըքյնա̈մ։ Օխտը օր ճամփա պահեցեք, եթե էկա, մըհել տուք հերթով կըքյնա̈ք. եթե չէ ծըեզանից թող մինն ու մինը կյա̈»։*

*Էրկու ախպըերը ըստի նստըմ են, մեծ ախպըերը ճամփա ա ընգյնըմ ու քյնըմ ա, քյնըմ ա՝ մըչև հասնըմ ա օխտը կըլխանի դևի պալատըի տուռը։ Մին կապըմ ա բակոնիցը,*

դենքերն էլ թասքիցր ու նի մըտնըմ, դեվը տրա̈ն տըենըմ ա թըչէ՝ վրա̈ ա թռչըմ ու կլլոխը թռցնըմ, քցըմ են ղոլը։

Տըհա̈նք օխտը օր ըտի ճամփա են պահըմ, տըենըմ են խա̈բա̈րութին չիկա, մինչնակը պուճուրին ասըմ ա. «Մըհել հիլա ես քյնա̈մ, էսա օխտը օր ա ճամփա ենք պահըմ, կա վըեչ»։

Պուճուրը ըտի նստըմ ա, մինչնակը ծին քշըմ ա էտ ճամփեննի քյնըմ։ Էնքան ա քյնըմ, մըչև հասնըմ ա օխտը կըլխանըի դեվի պալատըին, տըենըմ ա հըես ախպոր ծին բալկոնիցը կապած, դենքերն էլ վրեն, ասըմ ա. «Վըեր իմ ախպըերը ըստի ա, իրան դենքերը ըստի հիլ ա արել, էլ ես խի զենքով նի մտնեմ»։ Վեր ա կյա̈լի, ծին կապըմ ա ախպոր ծիյու կողկին, ինքն էլ իրան զենքերը կապըմ ա ծիյու թամքիցը ու առանց զենքի նի մտնըմ։ Էս օխտը կըլխանի դեվը տրա̈ն տըենըմ ա, թե չէ թուրը քաշըմ ա սրա̈ կյլոխն էլ ա թռցնըմ ու իրան ախպոր քըշտին մեդյնըմ։

Էս պուճուր ախպեր Ջըհան-բեկը տըենըմ ա, օխտը օրը թըմամեց վըե՛չ ախպըերտինք կան, վըե՛չ խա̈րա̈ր։ Սա̈ էլ ա ծին քշըմ, էտ ճամփեննի կյա̈լիս ա, հասնըմ ըտի։ Մըտիկ ա անըմ, տըենըմ հըես էրկու ախպոր ծիյանն էլ ըստի իրանց զենքովը սարքովը կապոտած, ծիյուցը վեր ա կյա̈լի, ուզըմ ա ինքն էլ իրան դենքերը ըտի հիլ անի, բիրդա̈ն հոր խոսկերը մըիտն ա ընդյնըմ. «Ա՛ բալա ջան, զարիր տեղերըմ վըերդի ուզըմ ա ըլես, քու զենքը քու ծըեռիցը քցես վըեչ»։ Ասըմ ա. «Ջէ՛, ես թուրըս ծըեռիս դեմ նի մըտնըիլ»։ Նի ա մըտնըմ, արենըմ ա՝ էրկու ախպոր կըլխնին էլ կտրած՝ ըստի իրար քշտի տըրա̈ծ։ Մըհել էտ հաղաղին տըենըմ ա՝ մի տո̈ւռը պա̈ց ըլա̈վ ու մի հեյվարա օխտը կըլխանի դեվ տո̈ւս եկավ, ասըմ ա. «Ա՜յ, պարով ես եկել, արի, արի՛ ես էլ քու ճամփըեն եմ պահըմ, արի մըժա̈ քու կյլոխն էլ կտրեմ, նոր նստեմ հաց ուտըեմ»։ Դեվը գյիդըմ չի, թե տա̈ զենքով ա եկել. Թուրը հանած կյա̈լիս ա դըբա տրա̈ն թե չէ, տըղեն էլ իրան թուրն ա տո̈ւս վըզըցնըմ։ Տըհա̈նք սկսըմ են կըռիվը, էնքան են չըրշարվըմ, կարըմ չեն մին մընի ախտըեն։ Էրկուսն էլ բըզա̈րել են, համա դե տըղեն նրա̈ կըլխներիցր չորսը արթեն կտրել ա, իրեքը կենըմ ա. տըժա̈րը մեչտեղի կյլոխն ա, եթե նա̈ կտրի, մեկելնին՝ հեչ։

Մըհել էտ կռվի թեժ վախտը մի եղոնիկ կյա̈լիս ա տղի ուսին կաղնըմ ու ընգաճին ասըմ ա. «Ջհա՜ն-բեկ, լեղ արա եդըցնըլ մի տրա̈ պո̈ւճուր ախպոր կյա̈լու վախտն ա, վըեր նա̈ եկավ, առթևն քու պա̈նը դյլիս տժա̈ր կըլի էրկուսի հետ»։ Հըլե եղոնի-

կը տըհն ա ասըմ Թըշէ՝ էս Ջհան-բեկը ուժ ա հվաքըմ իրան աշլիկըցնըմ, Թուրը պտըտըմ՝ հենց վրա̈ ա պիրըմ, վըեր տրա̈ իրեք կյլո̈խն էլ մըհետըմը Թըռցընըմ ա։

Սա̈ հըլե մի քիչ դինջանըմ ա, էն մի դեվն ա կյա̈լի։ Էտ դեվը, վըեր ախպոր կըլխնին ըտիյեք վըետա̈ռա̈ծ, ջանդաքն էլ տանովը մին փռըլած տըենըմ ա, լղաճաք ա ըլմ։ Տղին հըլա տըեհած չի ըլմ, տըղեն վըետնասա̈ս ա̈ մա̈նըմ, ծրեռաց Թուրը ծըեռին տուս ա կյա̈լի։ Էտ դեվին տըենըմ ա Թըշէ, վրա̈ ա քշըմ, Թուրը վրա̈ ա պիրըմ տրա̈ կյլո̈խն էլ Թռցնըի, դեվը ղանչաք ա անըմ, ասըմ ա. «Ամա՛ն գյո̈ւնմ, ես քու Թրիցը շատ վըխցա, վըեր էս կըլխնին սըհե Թռցրած տըեհա, մըեր էս սաղ հարստուԹինը քեզ ըլի, մըենակ ինձ տըհե փրԹես վըեշ։ Էն ղըլեն մի խոր, քառասուն գյա̈ղա̈նոց ֆըեր կա, տար ինձ քցի ընդի, մի ճղացըի քար էլ քցի վըեն, Թող ընդի. ինչքան կմնամ՝ մնամ, նոր մըեռնեմ, մըենակ ինձ տըհե փրԹիլ մի»։

Սա̈ վըեր տրենըմ ա, էս դեվը շատ ա ղանչանք անըմ, տանըմ ա քըցըմ էտ ֆըերը, մի ճղացըի քար էլ քցըմ վըեն ու կյա̈լիս ա։ Մըշև էտ նա̈ դեվիցը օԹախնըրի պըլա̈նիքնին վըե կալած ա ըլըմ, կյա̈լիս ա մին-մին պա̈ց ա անըմ ու ակը տալըի, տըենա ինչ կա։ Մի օԹախը պա̈ց ա անմ՝ լիքը վըեսկի, մընըմը՝ լիքը ա̈նգյին քար, մընմը՝ տեսակ-տըեսակ հաքնըիլու կտորեղեն, մընըմը՝ ուտըիլիք, վերշը էլ կյլո̈խտ ինչ ցվըցընեմ, ըշխարիս տակին ինչ վըեր սիրտըդ ուղի՝ Ջհան-բեկը տըենըմ ա։

Մըհել մի օԹախ ա պա̈ց անըմ, տըենըմ ա իրեք հատ է՜ն ղայդի հրեղեն ծի, է՜ն ղայդի ծի, իրանց ռանգի շորեր, զենքեր ու վըեսկա Թամքերն ու վըեսկա ղընԹըղըքերն էլ կողքերնուն, վըեր սըհե մարԹ զիմիշ չի անըմ, Թե մըտիկ անըի։ Ծիյանը մի ղոլըից են մարԹըի ըրմըցնըմ, իրանց սարքն ու կարքն էլ՝ մի ղոլըից։ Էս Ջըհան-բեկը էտ հըրեղեն ծիյանունցիցը մընին նստըմ ա, նրա̈ ռանգի զենքերը կապըմ, շորերը հաքնըմ, մի խուրջին վըեսկի լցնըմ ծիյու վրա̈ քցըմ, տռները փակոտըմ ու քյնըմ աշխարըման կյա̈լ։

Մի իրեք տարի ման ա կյա̈լի, աշխարքի տուտն ու պուճախըմ էլ տըեղ չի մընըմ, վըեր տա̈ ըլա̈ծ չի ըլըմ։ Մի օր էլ ասըմ ա. «Մի քյնամ տըենամ՝ իմ հերնըմըերը վըենց են»։ Կյա̈լիս ա հասնըմ իրան հոր քաղաքը մի չոբան ա պտահըմ, հրցընըմ ա, Թե. «Ըստեղի Թաքավըերը վե՞նց մարԹ ա, վըեն՞ց ա, լա՞վ ա, Թե չէ»։

Զոքանը ասըմ ա. «Լա̈վ մարթ էր, համա խեղճը մըեռավ. տըղերանց դա̈րփցը, իրեք տղա ուներ, մի օր իրեքն էլ տո̈ւս են կյալի քյնըմ Փըերսի, էն քյնա̈լն ա, վըեր քյա̈ցալ են, մըչև ըսօր տըեղեկութին չիկա, հըմի էլ մընացել ա մըենակ թաքուհին»։

Զոքանը վըեր սըհե ա ասըմ, Ջհան-բեկը էլ կարըմ չի իրան պահի՝ իրեսը թեքըմ ա ու ըսկսըմ լա̈ց ըլիլը։ Զոքանը մընըմ ա ըրմացած, ասըմ ա. «Տու ո՞վ ես»։

Ասըմ ա. «Ես Ջհան-բեկն եմ»։

— Վա՜յ, Ջհան-բեկ ջան, տո̈ւ պարով ես եկել, էս վըե՞րդի ես ըլել էսքան վախտ։

Ասըմ ա՝ սըհե սըհե պա̈ն։ Ծին քշըմ ա, կյա̈լիս ա տուն. մըերը ուրխանըմ ա, փթաթվըմ ա տղին պչպչըրում ա, նստըմ են զրից անըմ, ասըմ, խոսըմ։

Էքսը կանչըմ ա պալատըի մեծամեծներին մի քյեփ անմ, իրան հոր հարստութինը տհա̈նց վրա̈ փայ-փայ ա անըմ ու իրան մորը վըեր ունըմ կյա̈լի էտ դեվի պալատը։ Պիրըմ ա էտ պալատըմը ինչ կա՝ մորը չիմ շըհանց ա տալըի, էս՝ էս ա, էս՝ էն ա, ասըմ ա. «Ա՛յ մըերա, վըե՞րդի սըիրտդ ուզըի՝ կըքյնա̈ս, համա մըենակ էս մի դուըի վրա̈ քյնա̈ս վըեչ»։

Մի օր էլ վըեր տըղեն քյնա̈ցած ա ըլըմ Փըերսի, մըերը տո̈ւս ա էկել ման ա կյա̈լի, ասըմ ա. «Հա̈լըա̈թ Ջհան-բեկը ըստի ո̈ւրո̈ւշ ոա̈ն ունի պահած, վըեր ասըմ ա էն դուըի վրա̈ քյնա̈ս վըեչ, մի քյնա̈մ տըենամ էտ ի՞նչ ա»։ Սա̈ ըտիեք ման կյա̈լով, ըչիըհարիլով կյա̈լիս ա հասնըմ էտ Փըերի կուշտը, վըեր բիրդա̈ն հազըմ ա, փըռըշտըմ ա՝ դեվը տըա̈ ծըենը մա̈նըմ ա, ասըմ ա. «Էտ ո՞վ ես, ինձ ազատըի, ինչ ուզես, կտամ»։ Ասըմ ա. «Ի՞նչ կտա...» Ասըմ ա. «Մը լա̈վ քու ուզած մըտանի ունեմ պահած, վըեր հըլա ըշխարքիս տակին էն ղայդի մըտանի մի թաքավըերի կնիկ էլ տըեհել չի»։ Սա̈ քարը դեն ա քցըմ, քյնըմ ա թ-կը պիըըմ, կախ անըմ՝ էտ դեվին հանըմ, տանըմ պահըմ։

Սըհա̈նք տըղիցը թաքուն իրար սիրըմ են ու իրար առնըմ։ Օրերի մի օր տըղեն տըենըմ ա մոր փորը ուռել ա, մի օր էլ ասըմ ա. «Ա՛յ մըերա, էտ ի՞նչ ա ըլել քեզ»։ Ասըմ ա. «Գյիդըմ չեմ, Ջհան-բեկ ջան, ըստեղի ճո̈ւըը վըես կյա̈լիս չի, ինչ ուտըմ եմ, բըքնցնըմ, ուռցրնըմ ա, կարըմ չեմ մարսեմ»։ Սամսեն տղի մըտկովը անց չի կենըմ, թե մըերը տըհե պա̈ներ կանըի։

Մի դյըա̈գյի էլ վըեր Ջհան-բեկը Փըերսի քյա̈ցած ա ըլըմ, մըերը ազատվըմ ա՝ մի տղա ա պիըըմ, կընիկը տալըիս ա դեվին,

ասըմ ա. «Տա՛ր քոլի միչին վե քցի արի, վըեր րո̈ւգյո̈ւնը Ջհան-բեկը կյա̈ վըեչ տըեն̈ա»։ Էս դեվը վըեր ա ունըմ տանըմ ա վըխ-նիլեն՝ էլ կարըմ չի հեռու հենց տըեղ տանըի, վըեր օքմըի չի տըենա, համ էլ Ջհան-բեկիցը վախըմ ա, վըեր շատ խորը քյնա̈, հըյե նհե քոլըի ըռխներին ճմփին մոտըիկ չաքյա̈լի տակին ա տընըմ ու վռազ-վռազ կյա̈լի տապ անըմ տանը։

Տըղեն տուն կյա̈լիս, ըեխի լա̈ցի ծեն ս մա̈նըմ՝ կյա̈լիս ա տըենըմ ըտի մի նոր ըլա̈ծ ըրեխա լա̈ց ա ըլըմ, սրա̈ մեխկը կյա̈-լիս ա ասըմ ա. «Էնա տանեմ իմ մորը տամ, պահի մեծցնըի»։ Վըեր ա ունըմ, պիրըմ մորն ա տալըի, ասըմ ա. «Մի՛ ըեխա եմ քթել, ա՛ռ պահի մըծըցրու, մըեզ քյոմա̈կ կըլի»։

Մերը ղաստըի ասըմ ա. «Տար դենը կորցրու, ով ա գյիդըմ էս վըենց հարամ պիճ ա, վըենց էլ սրտմա չես ըլել, վըեր ես կալել պիրել»։ Վերչը, վըեր տըղեն շատ զոռ ա անըմ, նոր տա̈ վըեր ա ունըմ, տանըմ ա լղցնըմ, շոր կարըմ հըքցնըմ, ծիծ տալի ու քնցնըմ։

Տըղեն մեծանըմ ա, դառնըմ ա տասը-տասնչորս տըեկան։ Մի օր էլ վըեր Ջհան-ըեկը քյնըմ ա բազարը, տըհա̈նք իրար հետ թաքուն հա՛մ հաց են ուտըմ, հա՛մ էլ զրից են անըմ, մըհել դեվը ասըմ ա. «Ա՛ կընիկ, բա մըչն եփ դենք մըենք սըհե թաքուն ապրիլ, մըհել էս ա մըեր տըղեն մեծացել ա, բիրդա̈ն մըեզ իրար հետ կըտենա, Ջհան-բեկին խա̈բա̈ր կըտա, էրկուսիս էլ կսպանի»։ Կընիկը ասըմ ա. «Բա ի՞նչ անենք»։

Դեվը ասըմ ա. «Դե, էս պո̈ւճո̈ւըը էտ ա հա՛մ ինձանից ա, հա՛մ քեզանից. նա̈ հեչ. մեծն ա տըժա̈րը, նա̈ մըենակ քոհզանից ա։ Արի տու սուտըի հիվանդ տա̈ռ ու ասա՝ հիվանդ եմ, մըեռնըմ եմ, հեքիմ պիրիլ տու, հեքիմին մի պո̈ւըը վըեսկի տու, ասա թող ասըի՝ տրա̈ տեղը անմահական ճո̈ւրն ա, վըեր պիրեն խըմի կըլա̈վանա։ Նա̈ կքյնա̈ էտ ճըրին, էլ ետ չի կյա̈լ»։

Մի օր էլ մըերը հիվընդանըմ ա, տըղեն ասըմ ա. «Ա՛, մըերա, էտ ի՞նչ ա պտահել»։ Ասըմ ա. «Գյիդըմ չեմ, մըեռնըմ եմ, ինձ թափըի, հեքյիմ կանչիլ տու»։

Հեքիմ կանչիլ ա տալըի, տըղեն տո̄ւս ա կյա̈լի տո̄ւռը, կը-նիկը հեքիմին մի պո̈ւըը վըեսկի ա տալըի, ասըմ ա. «Ասա վըեր քու մորը անմահական ճո̈ւրը կըթափի, սըիրտս էտ ճրիցն ա ուզըմ, վըեր մի քիչ խմեմ»։ Հեքիմը վըեսկին ածըմ ա ջըբերը ու. տո̄ւս ա կյա̈լի տըղին կանչըմ ա, ասըմ ա. «Ջհա՛ն-բեկ, քու մո-

*րը մըննակ անմահական ճուրը կթափըի, եթե պիրես՝ մորտ կը-թափես»։*

*Էքսի ռավըետը Ջհան-բեկը ծին թամքըմ ա ու ճամփա ընգ-յընըմ։ Քյնըմ ա քյնըմ ա՝ մըչև մի ճմփըի ղրաղի մի տում ա պըտահըմ։ Ծին կղնցնըմ ա վեր ա կյա̈լի, քյնըմ էտ տունը, ըտեղ մի իմաստուն մարթ ա ըլըմ, ասըմ ա. «Պարով ծըեզ»։ Ասըմ ա. «Աստու պա̈րին, ա բալա ջա՛ն»։ Ասըմ ա. «Բալա ջա՛ն, էս սը-հե ղզղնած ուր ես քյնըմ»։ Ասըմ ա. «Ապի ջա՛ն, քյնըմ եմ ան-մահական ճրի»։ Ասըմ ա. «Բալա ջան, բա տըեղը գյիդըմ է՞ս»։ Ասըմ ա. «Ջէ՛, ապրի ջա՛ն»։ Ասըմ ա. «Դե վըեր տըհե ա, ըստի կաց՝ դինջացի, ըռավըետը կքյընա̈ս, տըենըմ եմ համ տո̈ւ ես բըղա̈րա̈ծ, հա՛մ ծիտ»։*

*Էս տըղի ծին տանըմ ա կապըմ, կյա̈րի տալըի, կյա̈լիս են նըստըմ, ատըմ, խոսըմ, հաց ուտըմ։ Էտ իմաստունը տըենըմ ա, վըեր էտ տըղեն ջատ լա̈վ տղա յա, համա սըա̈ն ղաստըի ուզըմ են դես ու դեն ղրգյեն, վըեր քյնա̈, ետ չի կյա̈։ Ըռուգյունը, վըեր տըեղը քըըմ են, քյնըմ, ըխչկանը ասըմ ա. «Ա՛ բալա, էս տըղեն ջատ լա̈վ, սյա̈րի, քաջ, խելոք տղա յա, քյնա̈ տըղարած մըտի ծո-ցը, նա̈ վերչը քու մարթը դի տա̈ռնալ ու տո̈ւք ջատ լա̈վ բախտա-վըեր կըլեք»։*

*Ախչիկն էլ հըլե տըհե պա̈նի ճամփա պահի·իս ա ըլըմ, նըա̈ մըհար վըեր Ջհան-բեկը էն զայդի սուրուն, բոյով-բուսով տըղա ա ըլել, վըեր նըա̈ն ինչ կընիկ, ինչ ախչիկ տըեհել ա, ծըեռաց խելքը վըրեն քյա̈ցել ա։ Ախչիկն էլ չի պակասըր ըլել, նա̈ էլ ա Ջհան-բեկի աչկին տիր էկած ըլել, համա դե նա̈ հըլա̈ անմահա-կան ճրի մըհար ա մտածըիլիս ըլըմ։ Համա վըեր հերը ըխչըկանը ասըմ ա, նա̈ էլ արթեն հըվանած ա ըլըմ. էլ արթեն ինչ ա մը-նըմ՝ քյնըմ ա տղի կուշտը, հետը զըըից անըմ, ասըմ խոսըմ ու տըհա̈նք իրար ծոցի քնըմ են, իրար խոսկը տալըի։*

*Ըռավըետը վըեր ա կենըմ, հաց են ուտըմ, ըխչկա հերը ա-սըմ ա. «Ա՛ բալա, էտ ճամփեննի էնքան կըքյնա̈ս, մի կանաչ ծոխկըրկոլոլ սար կա, էտ անմահական ճրի ա̈խպո̈ւրը հըե ընդի. օխտը կլխանի դեվն էլ հըե կոխքին քնած, նոր ա քուն մըտել ժա̈ժ չի տաս, կքյնա̈ս սուս ու փուս կուլետ կըլցնես ու կըկյա̈ս ըստի»։*

*Տըղեն տըհենց էլ անըմ ա, քյնըմ ա լցնըմ ա կյա̈լիս ա տը-հա̈նց տուն, ըլետ ըխչկա ծոցըմը քնըմ ա, հերը ճո̈ւրը փոխըմ ա՝ անմահականը վըեր ա ունըմ, ուրուշ ճո̈ւր ա լցնըմ. տըենըմ ըտի։*

Ըռավըետը սա̈ վըեր ա կենըմ կյա̈լի ճո̈ւրը պիրըմ ա մորը տալըի։ Տըհա̈նք տըենըմ են Ջհան-բեկը եա եկավ, մըտածըմ են ի՞նչ անենք, վըեր հենց տըեղ ղրգյենք, քյնա̈, էլ եա չիկյա̈։ Մըհել ա մերը ղաստըի հիվնդանըմ, էս մըհետն էլ ղըգյըմ են անմահական խնձո̈րի։ Ըլետ ծին նստըմ ա կյա̈լիս ա էտ իմաստունըի կուշտը, ասըմ ա. «Մըհի ընչի՞ էս քյնըմ»։ Ասըմ ա. «Անմահական խնձո̈րի»։ Իմաստունը ասըմ ա. «Պա՜հ, քու էտ պա̈նի ղըրգյողնին գյո̈ռբա̈գյո̈ռ ըլեն, էս քեզ ուզըմ են հըլե վըետով-կլխով կորցրած ըլե՞ն»։

Ջհան-բեկը ըստեղ մի քիչ նեղանըմ ա, ասըմ ա. «Ապըի՛ ջան, սա̈ մըենակ իմ մըերն ա, էլ ո՞վ կա, վըեր ասըմ եա»։

Ասըմ ա. «Ջէ՛, բալա ջան, տա̈ մի հոքու պա̈ն չի, էրկու հոքու մըտածած կործ ա, ուզըմ են քեզ հենց տըեղ ղրգյեն, վըեր քյնա̈լտ ըլի, կյալըտ չէ։ Արի տո̈ւ կաց իմ տանը, փսակեմ ծըեկ իրար հետ՝ բախտավըեր ապրեցեք, թե չէ էս մրհետն էլ վըեր ընդիյան եա կյա̈ս, մին ա քեզ քու տան միչին դեն կտոր-կտոր անըիլ»։

Ջհան-բեկը ասըմ ա. «Ապըի՛ ջան, իգյիթը պըետկ ա վախլուկ չի ըլի՝ սրտոք ըլի, մահն ու փորցանքը նրա̈ աչկին մի մըժեղի կյին ունենա, բա ամոթ չի, վըեր ես վախեմ ու քյնա̈մ վըեչ, էլ վըե՞ր օրվա իգյիթն եմ»։

Ասըմ ա. «Դե՛, տո̈ւ ես գյիդըմ, ա բալա ջա՛ն, վըեր տըհե ա՝ էս ծա̈խու ճամփեննի էնքան կըքյնա̈ս մըչև մի չինարի կըպտահի. տրա̈ կըլխին մի Զմրո̈ւթ ղուշ կա, ամըեն տարի ըտի պո̈ւն ա շինըմ, ծո̈ւ ածըմ, ճուտեր ա հանըմ, հըլե կյալիս ա թռչիլու վա̈գեն՝ հըրամըին տրա̈ ճուտերը ուտըմ ա. եթե կըրացիր էս մըհետ նրա̈ ճուտըերին ազատըես հըրամու ծըեռիցը, նա̈ քեզ կտանըի անմահական խնձո̈րի կուշտը, թե հու չէ ո̈ւրո̈ւշ օքմըի. ո̈ւրո̈ւշ հավք, մի պա̈ն էլ ա կարալ չի քեզ ընդի հըսըցնըի։

Էս Ջհան-բեկը ծին քշըմ ա ու քյնըմ, հասնըմ ա չինարքու կուշտը, էն հադաղին, վըեր հըրամըին ծառի լաշնըվըեր դըլերըմ ա, վըեր ճուտըերին ուտըի։ Թուրը քաշըմ ա ու ծըեռաց ըսկսըմ տրա̈ն կտոր-կտոր փըրթիլը։ Փըրթըմ ա էն ղոլեն սա̈քյըմ, ու ինքը էն ղրաղին քնըմ ա։ Մըհել Զմրո̈ւթ ղուշը կյա̈լիս ա, հըլե հեռվըից տըենըմ ա տրա̈ն, գյիդըմ ա, թե ճուտերին ուտողը նա̈ ա։ Վրա̈ ա քշըմ՝ ուզըմ ա էտ տըղին քրքրի, համա ճուտերը հիլ չեն անըմ, ասըմ են. «Մրեզ թափողը տա̈ ա ըլել»։

Ղուշը թևերը արևըին դեմ ա անըմ, վըեր տըղի վրա̈ շըվաք

ըլի, ընքան տըհե կենըմ ա, չքելը տըղեն զա̈րթնըմ աւ Ասըմ ա. «Տղա՛, էս օխտը տարի ա, վըեր ես ըստի պո̈ւն եմ չինել, օխտը տարի ա, վըեր ճուտեր եմ անըմ, համա մի տարի էլ տ կըրացել չեմ իմ ճուտըերը իրանց մուըազին հսցնեմ, հմի տաւ ըսօր ւիրկեցիը իմ ճուտերին, ասա ուզածտ ի՞նչ ա»։

Ասըմ ա. «Ես քեղանից խնթըըմ եմ, վըեր տո̈ւ ինձ տանես անմահական խնձորի կուշտը»։

Ասըմ ա. «Ինչ ալած, չնայած պըռավել եմ, ինձ մըհար շատ արժա̈ր ա, համա դը տո̈ւ ինձ հենց պա̈ն արել ես, վըեր կյա̈նքս էլ ուղես, խնայիլ չեմ»։

Ջհան-բեկը նստըմ ա Զմրո̈ւթ ղուշի միչկին, ղուշը տըրա̈ն սանըմ ա Սըև ծովը անց կըցնըմ, հըսցնըմ անմահական խնձո̈րի ալեղը։ Տըղեն քաղըմ ա՝ խուըջինը լցնըմ, ըլետ դշի միչկին նստըմ տ՝ տրա̈ն պիրըմ ա ըլետ չինարքու տակը իրան ծիյու կըշտին վեր արնըմ, ասըմ ա. «Դե՛ գ;նա̈, մի բըրո̈ւ էլ իրանըից պուկըմ ա տալըիս ա տրո̈ւին, ասըմ ա. «Ա՛ռ, էս էլ ջըըմըտ պահի, վըեր արեղտ նեղը կըլի, էտ կըկրցնես, ես քեզ օքնութին կկյա̈մ»։

Տղեն խուըջինը քցըմ ա ծիյու վըրա̈, նստըմ ա ու քշըմ։ Կյա̈լիս ա հասնըմ էտ իմաստունի տուն, քըշերը ըտի քնըմ ա, դինջա̈նըմ։ Նըհա̈նք ըլետ էտ խնձորնին վըեր են ունըմ, ծուրո̈ւշ խընձո̈ր ածըմ խուըջինը։ Ըռավըետը սա̈ վըեր ա կենըմ, ծին քշըմ ա ու կյա̈լի իրանց տուն, խնձո̈ըը տալըիս ա մորը։ Դեվը տըենըմ ա, վըեր չէ՛, ըլըմ չի, դո̈ըը ղըզյըմ ետ ա կյա̈լի. նա̈ էլ մըենակ չի ըլըմ, վըեր ուղատը քցի սպանըի. միշտ պո̈ւճուր ախպըերը հետն ա, նըհա̈նք էլ էնքամ իրար հետ սերով են ըլըմ, վըեր ասըիլու չի։ Վերջը մի օը մըերը պո̈ւճո̈ւր տըղին ասըմ ա. «Ըսօր տանը կաց, դործ ունենք, ես ու տո̈ւ քյնա̈լ դենք ո̈ւրո̈ւշ տըեղ»։ Մըերը պո̈ւճո̈ւր տըղին վըեր ա ունըմ քյնըմ ման կյա̈լ, դեվը տանը տապ ա անըմ։ Ճա̈շին Ջհան-բեկը կյա̈լիս ա տուն, հաց ա ուտըմ ու պըրանվըմ ա դինջանըմ։ Տա̈ քընըմ ա թե չէ՝ դեվը տո̈ւս ա կյա̈լի թուրը քաշըմ, տրա̈ն կտոր-կտոր փըրթըմ ա, հըլե էտ փըրթելու վախտը մըերն ու տըղեն կյա̈լիս են։ Պո̈ւճո̈ւր ախպըերը ըսկըմ ա լա̈ց ըլիլը, մըերը ասըմ ա. «Լա̈ց մի ըլիլ, փառք աստու, խի ես լա̈ց ըլըմ, հերտ էլ ա ըստի, մըերտ էլ, էս ա քեզ մըհար էլ մի լա̈վ ախչիկ կուզենք, ըրեխեք կունենաս, տուն-տեղ կըլես, քեզ ի՞նչ ա ըլել, վըեր տո̈ւ լա̈ց ես ըլըմ»։

Ըստեղ տըղեն կըլխի ա, վըեր հերնըմըերը իրան մեծ ախպոըը ուղըմ չեն։ Ասըմ ա. «Ա՛յ մըերա, ըրեխեն վըեր կա, ինձանըից

ա, ըլեն կունենամ, կընըիկը վըեր կա՝ յ․․ ախչիկ ա, մինն էլ կճարեմ, համա Ջհան-բեկի պըես իգյիթ ․․․պըեր էլ վըերղիյան կըճարեմա։ Ռեվը էտ կըտորնըին լցնըմ ա խուրջինը, տղին ասըմ ա. «Տա՛ր կյետը քցի, արի»։ Տըղեն էլ ուզըմ չի կյետը քցի խուրջինը, քցըմ ա ախպոր հրեղեն ծիյու վրա̈ ու տանըմ ա հեռու տա̈շտըմ՝ իրան զենքը, շորը, պա̈նը վրեն պապած բըախըմ ա, ասըմ ա. «Ա՛ծի, իմ ախպորը սաղ վախտին շատ ես ման ածըել, մի քիչ էլ տըհենց ման ածա»։

էս Ծին ա՝ սըհե ըրածիլով, ման կյա̈լով կյա̈լիս ա էտ իմաստունի տռա̈նը կաղնում, չո̈ւնքի սավոր ա ըլըմ, ախչիկը միշտ լա̈վլա̈վ պա̈ներով ա կորըմը տալըիս ըլել։ Մըհել տըհա̈նք տուս են կյալի տուռը, տըենըմ են Ջհան-բեկի ծին հրես տըռա̈նը, խուրջինը վըրեն քըցա̈ծ, ինքը՝ կավըեչ։ Մըտիկ են անըմ խուըջընի երկու հակն էլ իրան ջա̈նդա̈քն ա, ախչիկը ըսկսըմ ա կըլխին վըեթակիլը՝ լա̈ց ըլիլը։ Հերը ասըմ ա. «Լա̈ց մի ըլի, ա՛ բալա, լա̈ց ըլիլով էտ տըղեն սըղանալ չի. ըեղ արա խուրջինը պի տուն, տըենանք ինչ ենք չինում»։

Պիրըմ են տուն, սիպտակ կտորը փըռըմ՝ կըտորնին իրար են կպցընմ, անմահական ճուր քըմ, անմահական խնձո̈րնին կտրատըմ դիլիմ-դիլիմ անըմ, տընըմ էտ կտորների կպցրած տըեղերը ու իրեք օրը մըհետ խնձո̈րնին փոխըմ, օրը իրեք հետ անմահական ճուր են քըմ, Վըրա̈ իննը օրը իմաստունը մըտիկ ա անըմ, տըենըմ ա արթեն յարենին սղացել ա, էլ ըսկի տըեղերն էլ չի մա̈շուք անըմ։ Էքսը նոր պիրըմ ա անմահական ճուրը, արա̈ պերնովը դըվըեր ածըմ, անմահական խնձո̈րն էլ քըթի տակին տնըմ, վըեր ֆըետը քյնա̈։ Մի իրեք սըհաթից եղը, տա̈ կամաց-կամաց ժա̈ժ ա կյա̈լի, մըհել ասըմ ա. «Օ՜ֆ, էս խի՞ չեն հիլ անըմ, մարթ մի քիչ քնըի»։

Իմաստունը ասըմ ա. «Վըե՛ կաց, վըե՛ կաց, տընաքանդ չի ըլես տո̈ւ, քեզ հենց քընցրել են. վըեր ծիտ ըստի չէր պիրել էլ տու վըե կենողը չիր»։ Սա̈ կամաց աչկերը պա̈ց ա անըմ, տրենըմ ա իմաստունի տանը, ասըմ ա. «Արա՛, էս վըե՞րդի եմ»։ Ասըմ ա. «Սինգյդե՞մ, տըենըմ չես վըերդի ես»։

Նոր տըհանք Ջհան-բեկին մանրամասն պատմըմ են, թե ինչ օյին ա էկել կըլխովը։ Ըստի նոր հերը ըխչկանը ասըմ ա. «Այ սրա̈ մըհար ասըի խնձո̈րնին փոխի, ճուրը փոխի, գյիդիք թե ինձ մըհար ասըի՞»։

Էրկուսն էլ փթփթվըմ են՝ իմաստունըի ճտո̈վը ընգյնմ. պըչ-

պըրշորըմ, տըղեն շատ շնորհակալութին ա ասըմ, վըեր քյնա, իմաստունը հիլ չի անըմ, ասըմ ա. «Հըլա քառասուն օր ըստի պըետկ ա կենաս ու պըետկ ա ես ասեմ, թե ինչ պըետկ ա ուտես»։

Քառասուն օր սրան լավ պահըմ ա, ուտըցընըմ, խըմցնըմ, վըեր քառասուն օրը թմամըմ ա, ասըմ ա. «Դե քյնա ուժըտ էն ծառի վրա փորցի»։ Քյնըմ ա, վըեր թրով ծառին տալըիս ա՝ ծառը թոցնըմ ա, քցըմ էն զոլը։ Ասըմ ա. «Դե՛ հիմի տըերը քեզ հետ քյնա»։

Սա կյալիս ա ըտի, դեվին էլ, մորն էլ սպանըմ ա, կտորկտոր անըմ, իրանց օթախների ըլած-չըլածը ծիյանուն պեռնըմ ու իրան ախպոր հետ կյալիս ա իմաստունի տուն, նրա ըխչկա հետ հըրսանիք ա ըլըմ ու իրանց մըհար ապըրըմ են։

Օրերի մի օր պուճուր ախպըերը էրազ ա տենըմ՝ Ասլան թաքավըերի ըխչկա հետ մըտանըքները փոխեցին։ Ըռավըետը, վըեր ա կենըմ, ախպորը ասըմ ա. «Սըհե-սըհե էրազ եմ տըեհել, պըետկ ա քյնամ»։ Ախպըերը ասըմ ա. «Մի քանի օր կաց, իրար հետ կքյնանք»։ Ասըմ ա. «Չէ՛, տու հըլա նոր ես լավացել, չոլ մի տուս կյա, մըչև յարենիտ լավ սըղանա, ես մըենակ կըքյընամ»։ Ասըմ ա. «Դե՛, վըեր տըհե ա, ա՛ռ էս մազն ու էս բըմբուլը, տըեղըտ նեղը կընգյնի թե չէ՝ կըկըցնես. եթե ինձ ուզես՝ մազը կըկըցնես, ուրուշ պանի կարիք ունենաս՝ բըմբուլը կըկըցնես, Զմրութ ղուշը քեզ քյոմակ կըհասնի»։

Ըըհանք իրար պըռոշտի են անըմ ու պուճուր ախպըերը խուրջինը վըեսկին լցնըմ ա, քցըմ ծիյուն, ինքն էլ նստըմ վրեն՝ ճամփա ընդյնըմ, թե ուր ա քյնըմ՝ ինքն էլ չի դյիդըմ։ Սա շատ ա քյընըմ, թե քիչ՝ աստոծ ա գյիդըմ։ Վըեր իրեք տարին թըմամըմ ա, մի լըն արեսակ երգյիր ա հասնըմ, վըեր ինքն էլ ա ըրմանըմ, ասըմ ա. «Արա՛, էս անդերը հու տըախտը սա չի։ Տըենաս էս վըե՞ր թաքավըերի երգյիրն ա»։ Մըհել տըենըմ ա մի չոբան պըտահեց, ասըմ ա. «Պարով, ա՛ չոբան»։ Ասըմ ա. «Աստու պարին»։ Ասըմ ա. «Կարա՞ս ասես՝ էս վըե՞ր թաքավըերի հողն ա»։ Ասըմ ա. «Ասլան թաքավըերի հողն ա»։

Էս տըղեն ուրախութենիցը մի պուռը վըեսկի ա խուրջնըիցը հանըմ տալըի չոբանին ու ծին քշըմ ա կյալիս ա թաքավըերի քաղաքը։ Ըստի մի պռավըի տան ղոնաղ ա ըլըմ. տըենըմ ա՝ էս պառավը վըե՛չ քնըիլու տըեղաշոր ունըի, վըե՛չ կըռավաթ կա, վրե՛չ էլ կարքին ուտըիլու պան կա։

Մի պո̄ւռը վըեսկի ա տալըի, մի թուխտ ա կյըըմ՝ ինչ ա տան մըհար պըետկը, ինչ ուտըիլիք ա պըետկը, էս կընգյա̈ հետ կըըրգյեք, վըեսկին էլ կստանաք։ Պառավը վըեր ա ունըմ քյնըմ. ինչ վըեր կա՝ ըրգյըմ են, իրեք սհաթեն եգը պըռավըի տունը հենց ըրթա̈րվըմ ա, վըեր պառավը աչկերին հվատըմ չի, գյիդըմ ա, թե էրազըմ ա։ Էքսը, վըեր հաց են ուտըմ պըըծնըմ, ասըմ ա. «Մայըի՛կ»։ Ասըմ ա. «Ի՞նչ ա»։ Ասըմ ա. «Կարա՞ս թաքավըերի ըխչկա օթախըի տըեղը մա̈նա̈ս ու ինձ ասըես»։ Ասըմ ա. «Խի՞ չեմ կարալ, քե մատաղ, էտ ինչ մի տժա̈ր պա̈ն ա վըեր»։ Ասըմ ա. «Մայրիկ ջա՛ն, ես խամ տղա եմ, ուզըմ եմ էսօր տո̄ւ էտ պա̈նը մա̈նաս ու կյա̈ս ինձ ասըես։ Նրա ակոշկեն էլ կարըմ ես միշտ պա̈ց պահիլ տոււ»։

Պառավը գյիդըմ ա, վըեր թաքավըերի ախչիկը ծախկընի շատ ա սիրըմ. քյնըմ ա հենց տըեղից, էն ղայդի ծաղկընի ա ճարըմ, վըեր սըհե մըտիկ ես անըմ՝ խելքտ թռչըմ ա, վըեր տըենողը ըրմանըմ ա, թե էս ղայդի ծաղկընին վըերդի՞ան ա պիրած։ Մը լա̈վ փունջ ա շինըմ, վըեր ա ունըմ կյա̈լի ըտի, ասըմ ա. «Ես թաքավըերի ախչկա կուշտն եմ քյնըմ»։

Տանըմ ա էտ ծաղկընին թաքավըերի ըխչկանը տալըի, ասըմ ա. «Ախչիկ ջա՛ն, ծաղկնըին միշտ ակոշկըմ տի, ակոշկեն էլ պա̈ց հիլա. սհանք վեց-օխտը ամըիս տըհե կըկենան ու տըհե լա̈վ ֆըետ կըտան»։

Թաքավըերի ըխչկա խելքը էտ ծաղկըների վրա̈ քյնըմ ա. «Վա՛յ նանի շա՛ն, էս վըե՞րդիան ես ճարել, ես հըլա̈ էս ղայդի ծաղկընի չեմ տեհել»։

Պառավը մըխելի նստըմ ա խոսըմ, զըից ա անըմ ու իրան ծըեռովը ակոշկեն պա̈ց ա անըմ, ամանը ճո̄ւր լցնըմ ու ծաղիկը տընմ միչին, բրախըմ կյա̈լի։ Տղին ասըմ ա. «Վըեր, բալա ջան, էս ճամփեննի կքյնա̈ս, էն ամըենավերչի ակոշկեն նրա̈նն ա, իմ ծըեռովը պա̈ց եմ արել ու էկել»։

Մթնըմ ա թե չէ՝ տըղեն քյնըմ ա, էտ ակոշկի տակը քյնըմ ա կյա̈լիս ա, տըենըմ ա, վըեր դիյերելու, ընդի մըտնըիլու ճար չիկա, մըհել բիրդա̈ն մըիտն ա ընգյնըմ ախպոր տըված բմբո̄ւլը. կամաց ծոցիցը հանըմ ա ու կրցնըմ՝ էտ Զմրո̄ւթ ղուշը ծըեռաց վեր ա կյա̈լի։ Տըղեն նստըմ ա ու կյա̈լի ըխչկա օթախը. նըրից մի բմբո̄ւլ ա պուկըմ ու ղուշը թռչըմ ա քյնըմ։ Ինքը արենըմ ա՝ ախչիկը քնած ա, կոխկին էլ մի մեծ կարմըիր խնձո̄ռ տըրա̈ծ, աչու ղըլեն՝ կարմըիր շամ ա էրըմ, ծախու ղըլեն՝ կանաչ,

սա̈ ի՛ա խնձո̈րիցը մը լա̈վ կըծըմ ա, ըխչկա Թուշիցը պաչըմ ա, էա աչու ղըլըի շամը տընըմ ա ծախու ղըլեն, ծախու ղըլըինն էլ աչու զըլեն ու ըրախըմ կյա̈լի տու̈մ։ Ըռավըետը ախչիկը վըեր ա կենըմ, տենըմ ա իրան խնձո̈րիցը կըերել են, շամըերի տեղերը փոխել են, հայլու միչին էլ մըտիկ ա անըմ տըենըմ ա՝ Թուշին խալ կա. Թուշն էլ պաչել են, տըեղը խալ ա մնացել։ Ինչ վըեր ըլել ա հորը պաամըմ ա։ Էքսը հերը պահակնի ա տնըմ, համա տա̈ ինչ օքուտ, նա̈ ըլետ Զմրու̈թ ղուշին նստած կյա̈լիս ա ակոշկիցը նի մանըմ, ըլետ տըհե անըմ ու էս մըհետը էրկու ծըծըիցն ա պաչըմ, ըլետ քյնըմ։ Էն մի քշերը ախչիկը ասըմ ա. «Ես ընըիլ չըդեմ, պըետկ ա ղա̈րթուն կենամ, տըենամ էս ո՞վ ա»։

Սա̈ չըել քշերվա կեսը նստըմ ա, քշերվա կեսին քունը տանըմ ա, սա տըենըմ ա՝ կարըմ չի նստըի, պիըըմ ա մատը կըտըըմ ա, աղ ա ածըմ վըեն, վըեր մխկտա, քնի վըեչ։

Մըխնլի նստըմ ա, մըհել տըենըմ ա հըես տղեն. Զմրու̈թ ղըշին նստած ակոշկովը էկավ։ Սըհա̈նք, վըեր էրկուսն էլ իրարաչկունքի շատ մըտիկ են անըմ, սիրըհարվըմ են ու նստըմ իրար հետ ուտըմ, խըմըմ, քյեփ են անմ, մըչև լիսը. վըեր լիսանըմ ա, ասըմ ա. «Արի՛, քյնա̈նք մըեր տուն»։ Ախչիկը ասըմ ա. «Չէ՛, մի օխտը կըլխանըի դեվ կա, մըեր քաղաքին ճու̈ր չի տալըի. եթե էն դեվին սպանես՝ իմ հերը ինձ կտա քեզ, եթե չէ՝ տալ չի»։

Տըղեն էքսը քյնըմ ա ընդի բմբո̈ւլը կըցնըմ, Զմրու̈թ ղուշը կյա̈լիս ա, ասըմ ա. «Զմրու̈թ ղո՛ւշ, տո̈ւ ղշերի Թաքավըերն ես, ինձ շատ նըեղ տըեղերից ես ազատել, էս մի տըեղից էլ ազատըի, քու լա̈վութինի տակիցը հա̈լբա̈թ մի օր տուս կըկյամ»։ Ասըմ ա. «Էտ ի՞նչ ա»։ Ասըմ ա. «Ես Թաքավըերի ըխչկանը ուզըմ եմ, հըմի նա ինձ ասըմ ա, թե օխտը կըլխանըի դեվին սպանցիր՝ ախչիկս քեզ կտամ, թե հու չէ՝ տալ չեմ»։ Ասըմ ա. «Աչկիս վըա»։ Ու քյնըմ ա, ինչքան հըամըի ղուզղուննըի կա, հըվաըըմ ա, ղիըըմ ա։ Կյա̈լիս են, սկսըմ են էտ դեվին կտցիլը. ըըըըիլը, արդեն էլ Թըըով ա ըսկսըմ տըա̈ կլխնին փըթիլը. մըչև դեվին սպանըմ են, սղանըիլն ու ա̈խպուըը ըլթալա տու̈ս անըիլը մին ա ըլըմ։

Տըղեն շըըերը հանըմ ա, տընըմ քարի տակին ու էդ ըխպըիակնըմըը ուղըմ ա լըղանա, չու̈նքյի մա̈ցել ա, վըեր ով առաչի տու̈ս ըկած ըխպըի ակնըմըը լղանա՝ նա̈ իրան մուրազին կարժանանա։ Էտ արդեն ըլղանալըիս Ծկա̈ն Թաքավըերի ախչիկը կյո̈ղանըմ ա տըա̈ն ու տանըմ ա։ Հարե՛յ, ին պիըըմ Թաքավըերի ըխչկանը, թե՝

Հասի, Ծըկա̄ն թաքավըրերի ախչիկը սիրածիտ տարավ։ Էս թաքավըրերի ախչիկը ծըեռաց իրեք վըեսկա թաս ա վըեր ունըմ ու կյա̄լիս ա ըտի։ Մեծ թասը քցըմ ա, ասըմ ա. «Ծըկա̄ն թաքավըրերի ախչի՛կ, մեծ ախչիկ իմ ամանաթս տուս»։ Ասըմ ա. «Իմ կըշտին չի, իմ քվորը հըրցրուս»։

Էն մի թասն ա քցըմ ու ըլետ ասըմ ա.— «Ծկա̄ն թաքավըրերի ախչի՛կ, ամանաթս տուս»։ Նա̄ էլ ա ասըմ, թե՝ «Իմ կըշտին չի»։

Մըհել քյնըմ ա, մի քիչ էն ղոլն ա քյնըմ, էն մի թասն ա քցըմ, ասըմ ա. «Խնթըրըմ եմ Ծկա̄ն թաքավըրերի ախչիկ, ամանաթս տուս»։

Հըլե սըհե ա ասըմ, մըհել տըենըմ ա հրես մի հուրի-փա̄րի ախչիկ դըրա̄ իրան ա կյա̄լի ու ասըմ ա. «Էտ ամանաթը չքել ըսօր քունն ա ըլել, ըսօրեց եդն էլ իմը կըլի»։ Տըղեն քըմակիցը տո̄ւս ա կյա̄լի ու հսկըցնըմ ա, թե չորերըս հրե էն քարի տակին, հանրի պի։ Պիրըմ ա, ասըմ ա. «Բմբո̄ւլը վըցրուս»։ Ախչիկը կըրցընըմ ա թը չէ Ջմրուխ ղուշը կյա̄լիս ա, տըղին ազատըմ ա։ Սըհա̄նք իրար հետ կյա̄լիս են թաքավըրերի կուշտը, ախչիկը հորը ասըմ ա, վըեր օխտը կըլխանըի դեվին սա̄ ա սպանել։ Հերը ուրախութենիցը փըթաթվըում ա էտ տղին։ Պիրըմ ա տըհանց օխտը օր, օ՛խտը քշեր հըրսանիք անըմ. ուտըմ, խըմըմ, քյեփ են անըմ, ասըմ ա. «Դե՛, ես արթեն պըռավել եմ, արի տո̄ւ իմ տըեղը թաքավըեր տա̄ռ»։ Ասըմ ա. «Ես մըեծ ախպըեր ունեմ, քյնա̄լ դեմ նըրա̄ կուշտը»։

Կընգյա̄նը վըեր ա ունըմ, կյա̄լի Ջհան-բեկի կուշտը, օխտը օր ու քշեր ըստի են ուտըմ, խըմըմ, քյեփ անըմ։

Նըհա̄նք հասնըմ են իրանց մուրազին, տո̄ւք էլ հասնեք ծըեր մուրազին։

